

# ՊԱՏՄԱ-ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՈՒԿՅԱՆ  
Բանասիրական գիրությունների թեկնածու

## ՊԱՅՉԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՐԱԿԱՆ ՄԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ԱՎԵՑԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ - Պայծառակերպության մասին գրում են Մատթեոս, Մարկոս և Ղուկաս ավետարամիշները (Մատթ. ԺԷ 1-13, Մարկ. Ժ 1-12, Ղուկ. Ժ 28-36): Ավետարամում ասվում է, որ Հիսոս, իր հետ Վերցնելով Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաջալներին, ճրանց հետ մի բարձր լեռ է ենում և պայծառակերպվում աշակերտների առջև: Ինչպես Մատթեոս ավետարամիշն է գրում, Հիսոսի դեմքը լուսավորում է արեգակի համան, և Նրա հանդերձները սպիտակ են դառնում լոյսի պես: Այդ վորովում է արեգակի համան, և Նրա հանդերձները սպիտակ են դառնում լոյսի պես: Այդ ժամանակ առաջալների առջև երևում են Մովսեսն ու Եղիան, որ խոսում էին Նրա հետ: Այս տեսարանից ցնցված և ապշար Պետրոս առաջալը ասում է. «Տե՛ր, լավ է, որ մենք պատեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ կպատրաստենք, մենք Քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն է՝ Եղիայի»: Եվ մինչդեռ առաջալը խոսում էր, լուսավոր մի ամպ զալիս և հովանի է լինում Հիսոսի, Եղիայի ու Մովսեսի վրա, և ամայից հնչող ձայնը ասում է. «Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, Դրա՞ն լսեցեք»:

Հնչած այս ձայնից աշակերտները խիստ վախենում են և դեմքի վրա գետին ընկնում: Հիսոս, մոտենալով ճրանց, ասում է՝ վեր կացեք և մի՛ վախեցեք: Առաջալները վեր նայելով՝ Հիսոսից բացի ոչ ոքի չեն տեսնում: Եվ երբ լեռան բարձունքից վար են իջնում, Հիսոս ճրանց պատվիրում է իրենց տեսածի մասին մարդկանց ոչինչ չասել, «Մինչև որ մարդու Որդին մոռելներից հարություն առնի»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ - Ավետարամական պատմության հետևող դուրսամբ՝ Պայծառակերպության տեսարամի կենտրոնում լեռան գագաթին, պատկերվում է Քրիստոս, Նրա աջ և ձախ կողմերում Մովսեսն ու Եղիան, իսկ լեռան լանջին՝ Պետրոս, Հովհաննես և Հակոբոս առաջալները:

Լուսավոր ամպը երկայացվում է ձվածի (Էլիասան մանդողայի) միջոցով, որի մեջ գտնվում է Քրիստոս (երբեմն նաև՝ Մովսեսն ու Եղիան), իսկ Հայրական Ձայնը՝ երկարի կիսաշրջանից վար պարզված Հայրական Աջի միջոցով:

Քանի որ Պայծառակերպությունը նաև խորհրդանշում է դրախտային լուսավոր հանդերձին մարդու վերստին արժանի դառնալը, նույն ձևով երկիրը էլ այստեղ ներկայացնում է վերգոտած դրախտային վայելչությունը, որը խորհրդանշում են Պայծառակերպության տեսարամում պատկերվող բույսերը:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱԿ ՀԱՅԱԳՈՒՅՑ ՊԱՏԿԵՐԸ - Պայծառակերպության տեսարամի հնագույն պատկերներից մեկը, կամ թերևս ամենահնագույնը, Ռավենայի Սուրբ Ապողինար եկեղեցու (549 թ.) բամի խանմկարն (Մողակիկան): Այստեղ ընտրված է պատկերման խորհրդանշական (ախմվոլիկ) եղանակը: Փրկիչը պատկերված է խաչի միջոցով, որը շրջափակված է փայլող աստղերով և գտնվում է շրջանագծի (մեղալինի) մեջ (Բկ. 1):

«Ես եմ Ալփան և Օմեզան» խոսքերի հետևողությամբ խաչի երկու կողմերում գրված են և առառերր խորհրդանշելով Քրիստոսին՝ որպես սկիզբ և վերջ:

Խաչի վերևում գրված է ԽԹՅՍ «Իխտիս» (ձուկ): Քրիստոնեության առաջին դարերում այն խորհրդանշում էր Քրիստոսին և քրիստոնյաներին: Առաքյալները, լինելով ձկնորսներ, առաքելության կոչվելուց հետո դարձան հոգիների ձկնորսներ, որով և ձուկը խորհրդանշում էր առաքյալների կողմից որսված՝ դարձի բերված քրիստոնյաներին:

Առաջին քրիստոնյաները «Իխտիս» բառը հումարենում ներկայացնում էին ակրոստիքոսային հետևյալ մեկնաբանությամբ՝

Իշուս	Հիսուս
Խրισտօս	Քրիստոս
Θεον	Աստծոն
Υιος	Որդին
Σωτερ	Փրկիչն

Ամեն այս պատճառով առաջին քրիստոնյաները որպես քրիստոնեության խորհրդանշան ձուկն էին պատկերում: Եվ քանի որ Պայծառակերպությունը այստեղ ներկայացված է սիմվոլիկ մեկնաբանմամբ, ուստի Փրկչին ներկայացնող խաչի վերևում Քրիստոսի փոխարին գրված է «Իխտիս»:

Խաչի ներքևում էլ գրված է՝ salius mundi-aշխարհի փրկությունը:

Խաչի վերևում պատկերված Աջը խորհրդանշում է Աստծոն և Բնչած Աստվածային Զայնը, իսկ խաչի աջ և ձախ կողմերում Եղիան և Մովսեսն են, որոնք ճախրելով դեռ խաչն են գալիս:

Խաչի ներքևում գտնվող երեք գառներն են խորհրդանշում են Պետրոս, Հովհաննես և Հակոբոս առաքյալներին:

Գտաներից ներքին՝ լեռան ստորոտին, պատկերված է ձեռքերը վեր պարզած Սուլը Ապոլինարը, որը եղել է Պետրոս առաքյալի աշակերտներից և քրիստոնեության առաջին համատակներից է: Վերջինն պատկերված է այս տեսարանում, որովհետև եկեղեցին կրում է նրա անունը, և նրա մասունքները ամփոփված են ներքեւում իր պատկերի առջև:

VII-VIII դարերով է թվագրվում Երոսաղենի Ս. Կատարինեն վանքի խճանկարը, որը Պայծառակերպության տեսարանն արդեն գտնում ենք թեմատիկ-պատմողական ներկայացմամբ և լիովին ձևավորված պատկերագրական կանոնով:

ՊԱՅՄԱՆԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ X-XI ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՄ - Հայկական մեզ հասած հնագույն Ավետարանները և ավետարանային պատահիները թվագրվում են VII-VIII դարերով: Պայծառակերպության պատկերներին, սակայն, հանդիպում ենք X-XI դարերի Ավետարաններում, որոնցից ստոյգ թվագրում ունեցողները XI դարից են, իսկ երկու մանրանկարներ են, ըստ ձեռագրային տվյալների, վերաբերում են X դարին:

Պայծառակերպության մանրանկարների շարքում առաջմ հայտնի հայկական հնագույն պատկերները, ամենայն հավանականությամբ, Շուղրութիւն և Վազգեն Վեհափառի Ավետարանների մանրանկարներն են: Շուղրութիւն Ավետարանի հիշատակարանում ասվում է, որ այն գրվել է 994 թ. Հովհաննես գրչի կողմից: Ինչպես, սակայն, նշում է արվեստաբան Ն. Քոթանջյանը, այս ձեռագրի մանրանկարները երկու խմբի են բաժանվում: Առաջին խմբին պատկանող մանրանկարները սկզբից ենթ մաս են կազմել այս Ավետարանին և, ըստ երևությին, կատարվել են Հովհաննես գրչի կողմից: Երկրորդ խմբի ման-

րամկարները, այդ թվում և Պայծառակերպության, ձեռագրի հետագա վերակազմությունների ընթացքում են կարվել հիշյալ մատյանին<sup>1</sup>:

Այս երկրորդ խմբի մանրամկարները, ըստ Ն. Քոթանջյանի, մի ընդհանրություն են գծում Երևանի Մատենադարանի հմր. 6201 ձեռագրի, որը գրվել է 1038 թ., նոյն թեմաներով ստեղծված մանրամկարների մեջ: Պայծառակերպության պատկերի Ծովորութի (նկ. 2) և 1038 թ. գրված (նկ. 3) Ավետարանների մանրամկարների քննությունը, ինչպես նաև դրանց համամատությունը այս թեմայով ստեղծված մի շարք այլ պատկերների հետ վկայում է, որ Ծովորութի Ավետարանի մանրամկարը ներկացնում է այս թեմայի պատկերագրության գարգացման XI դարին նախորդող փուլը ոչ միայն Հայաստանում, այլև ընդհանրապես արևելաքրիստոնեական միջավայրում:

X-XI դարերի մեջ հայտնի ձեռագրերից միայն Ծովորութի, Վազգեն Վեհափառի և 1038 թվականի Ավետարաններում է, որ Պայծառակերպությունը կոմպոզիցիոն կառուցվածքի առումով ասիմետրիկ է՝ վկայելով այս պատկերների և նրանց նախօրինակների արխաիկության մասին<sup>2</sup>:

Ի տարրերություն ընդունված կանոնի, որ Քրիստոսի աջ և ձախ կողմերում Մովսեսն ու Եղիան են, իսկ ներքևում՝ Պետրոսը, Հովհաննեար և Հակոբոսը, այս երկու մանրամկարներում Քրիստոսի ձախ կողմում Եղիան ու Մովսեսն են, իսկ աջ կողմում՝ առաջյաները: Վազգեն Վեհափառի Ավետարանում, սակայն, ուժ կողմում առաջյաներն են, իսկ ձախ կողմում Մովսեսն ու Եղիան (նկ. 4):

Ծովորութի Ավետարանը, սակայն, ունի հնության կարևոր մի նշանակ, որը հանդիպում է միայն այս ձեռագրում:

Արևելյան և ընդհանրապես բյուզանդական պատկերագրությունում Պայծառակերպության տեսարանում երեք առաջյաների հոգեվիճակը ներկայացվում է ըստ կատարվածի հանդես նույնացնելու յուրաքանչյուրի ունեցած անհատական ապրումների: Ծովորութի Ավետարանում, սակայն, երեք առաջյաներն են տարածվող լուսի հանդիման ոչ թե պարզապես ծածկել են իրենց աչքերը, այլ տպավորությունն առավել շեշտելու համար պատկերված են աչքերը թիկնոցով ծածկած:

Ինչպես ասացինք, Պայծառակերպության Ծովորութի Ավետարանի այս մանրամկարը բուն ձեռագրին է կցվել այս մատյանի հետագա վերանորոգությունների վերակազմության ժամանակ: Եվ այս մանրամկարի հնությունը առավել ընդգծված է դառնում, եթե այն համամատում ենք պատկերագրական այս ձևունու մյուս պատկերների հետ:


Սամսոն Պետերորդի հանրավին գրադարանի հունական հավաքածուի հմր. 21 ձեռագրում, որը գրված է IX դարում, աշակերտներից միայն մեկն է դեմքը թիկնոցով ծածկում<sup>3</sup>:

Կ. Վայցմանն, սակայն, կապ է գտնում Սամսոն Պետերորդի այս ձեռագրի և Վեհափառի Միհիթարյանների մոտ պահպող Տրապիզոնի նշանավոր Ավետարանի միջև, որի Պայ-

<sup>1</sup> Տե՛ս H. Kotaplijsian, Παγρυτεκος Εβαγγελικος, Σιայասրանը և Քրիստոնյա Արևելքը, Գիրառողութի կյուրել, Երևան, 2000, էջ 303:

<sup>2</sup> Թե՛ս այս դասընթացում և թե՛ս ընդհանրապես Տերունական մյուս պատկերների պատկերագրական այս կամ այն առանձնահարկության մասին հնարավոր կինքի ընդհանրացված նորահանդումներ կատարել, եթե կիրափարակվեն աշխարհի ծեսագրային խոշոր պահոցների հայկական ձևագրային հավաքածուների մանրամկարներ՝ համապարսկան թմբագրիկ դասակարգմանը:

<sup>3</sup> Տե՛ս H. Kotaplijsian, Παգρυτεκος Εβαγγελικος, էջ 304, տե՛ս C. Morphy, Notes on East Christian miniatures, „The Art Bulletin“ 1929, March, fig 103.





ծառակերպության մանրանկարում և առաջալներից Հովհաննեսը այսպես թիկնոցով է ծածկում դեմքը (Ակ. 5): Քանի որ այս մոտիվը բնորոշ չէ բյուզանդական պատկերագրությանը, իսկ Պետքրության ձեռագիրն է՝ դարձյալ Տրապիզոնից է, ուստի Վայցմանը գտնում է, որ միանգամայն հավանական է ենթադրել, որ առաջալներին աչքերը թիկնոցով ծածկած պատկերելը Փոքր Ասիայի տեղական մի հատկանիշը է<sup>4</sup>:

Ինչպես նշում է՝ Ն. Պոկրովսկին, դեմքը թիկնոցով ծածկելու մոտիվը հանդիպում է նաև Հոռոմի Ներեայի և Աքիլլեսի VIII-IX դարերի խճանկարում<sup>5</sup>:

Այսպիսով, Հոռոմի VIII-IX դարերի խճանկարում երեք առաջալներն ել պատկերվում են աչքերը թիկնոցով ծածկած, IX դարի հունական Ավետարանում, սակայն, առաջալներից միայն մեկն է աչքերը ծածկում թիկնոցով: Տրապիզոնի Ավետարանը թե՛ իր երկարագորի ոճով և թե՛ այն պատճառով, որ «հոն կը պակսին հնագոյն Աւետարաններու մէջ մոտքը չգործած հատուածներ կամ ընթերցումներ»<sup>6</sup>, ըստ Հ. Մ. Շանաշշանի, պատկանում է X դարին: Այս Ավետարանի Պայծառակերպության տեսարանում առաջալներից միայն Հովհաննեսն է աչքը ծածկել թիկնոցով: Պատահական չէ, որ առաջալներից հենց նա է աչքը պատճեն ծածկել:

Հովհաննեսը, որպես տարիքով ամենափոքրը և Տիրոջ սիրելի ու նվիրված աշակերտը, սովորաբար պատկերվում է առավել հովական հոգեվիճակով: Պայծառակերպության բուն կանոնում և նա պատկերվում է ձեռքով կամ ձեռքերով դեմքը ծածկած: Եվ առա, երեք առաջալների՝ իրենց դեմքը թիկնոցով ծածկելու դրվագը IX-X դարերի պատկերներում հանգում է առաջալներից միայն Հովհաննեսի՝ աչքերից մեկը պատճենուն, ապա 1038 թ. Ավետարանում արդեն այն հանդես է գալիս երեք առաջալների դեմքերը միայն ձեռքով ծածկելու ձևով: XI դարի երկրորդ կեսին և հաջորդող շրջանում գրված ձեռագրերում, սակայն, այս մոտիվը հիմնականում այլևս չի հանդիպում, և երեք առաջալներու պատկերվում են տարբեր հոգեվիճակներու:

Քանի որ X-XI դարերում չի հանդիպում Պայծառակերպության մի այնպիսի պատկեր, ուր առաջալները իրենց դեմքերը ծածկած լինեն թիկնոցով և կամ ընդհանրապես՝ իրենց հանդերձներով, ուստի կարելի է ենթադրել, որ Սույրութի Ավետարանի այս մանրանկարը կամ նրա նախօրինակը ստեղծվել է IX դարից ոչ ուշ:

Որպես պատկերագրական հին պահանջություն արձագանք՝ Պայծառակերպության ոչ սիմետրիկ կոմպոզիցիան և երեք առաջալների դեմքերը ձեռքերով ծածկած լինելու մոտիվը գտնում ենք նաև Երևանի Մատենադարանի հոմ. 4814 և 4818 ձեռագրերում, որոնք համապատասխանաբար գրվել են 1294 և 1316 թվականներին:

ՀԱՅՐԱԿԱՆ Ա.Զ.Ը ԵՎ. ԼՈՒՍԵՂԵՆ ԱՄՊ. - Մատթեոսի Ավետարանում ասվում է, որ Պայծառակերպության ժամանակ «մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ, ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի. Դրա՞ն լսեցեք»:


Մատթեոսի Ավետարանի մեկնության այս տողի բացատրությունում Հովհաննես Երզընկացին գրում է. «Սովորութիւն է Աստուծոյ ամենայն ուրեք ամազօք երևել, ըստ այնմ՝ ամպ և մէզ շուրջ է զնովալ»<sup>7</sup>:

<sup>4</sup> Տե՛ս Հ. Կոտոռյան, Եվ. աշխար, լ. 308:

<sup>5</sup> Հ. Պոկրովսկի, Եվալուսու և պամանական պատկերագրության մասին, Ս. Պետերբուրգ, 1892, լ. 202:

<sup>6</sup> Հայկական մանրանկարչություն, կազմեց Ն. Մ. Շանաշևան, հր. Ա. Վեններիկ, 1966, լ. 28:

<sup>7</sup> Հովհաննես Երզնկացի, Մամուրիս Սույր Անդարանին, որ սակ Մագրելուի, Կ. Պոլիս, 1825, լ. 364:



Հնած Հայրական Զայնը ինչպես Մկրտության, այնպես էլ Պայծառակերպության տեսարաններում պատկերվում է Հայրական Աշխ միջոցով: Ինչպես գրում է Ն. Պոկրովսկին, Հայրական Զայնը, ինչպես և ընդհանրապես Աստծո Անրկապությունը արտահայտվում է երկնքից կիաաշոշանաձն (սեզմենտաձն) ամպից պարզված Հայրական Աշխ միջոցով<sup>8</sup>: Պատկերն առավել խոսուն Անրկապացնեղու համար Հայրական Աշխ մոտ հաճախ գովում են հնած խոսքերը. «Դա է Որդի Խն սիրելի»:

Հայրական Աշխ, ինչպես տեսանք, արդեն Անրկապացված էր Պայծառակերպության հնագույն պատկերում Ռավելնենայի խճանկարում, ինչպես նաև հայկական հնագույն մասնակարներում սկզբալ Ծովորութիւն Ավետարանից:

Լուսավոր ամպն էլ Անրկապացվում է կամ կապիկու, ինչպես որ երկինքն է, և կամ էլ ուկեգովո՞ւ խորհրդանշեղով Աստվածության լույսը և փառքը:

Լուսեղեն ամպը սովորաբար Անրկապացվում է ձվածիրի կամ առավել մեծ շառավիղ և ընդգրկում ունեցող շրջանի ձևով, որը պայմանակարգության է այն հանգամանքով, թե արդյոք միայն Հիսուսն է պատկերվում ամպով պատված, թե՝ նաև Սովուն ու Եղիան: Ավետարանում ապօպում է, որ ամպը հովանի եղավ ճրանց վրա, և ըստ այդի՝ այն տարածվել է նաև Սովունի ու Եղիայի վրա:

Ծովորութիւն և 1038 թ. Ավետարանի մանրանկարներում ամպը պատկերված չէ, փոխարեն այն կա Տրապիզոնի Ավետարանում (XI դար), ինչպես նաև Պայծառակերպության տեսարանի XI դարի մյուս մանրանկարներում, որոնցում Քրիստոսի հետ միասին ամպի մեջ են Անրկապացվում նաև Սովուն ու Եղիան:

Պատկերագրական ուրույն մի խոսք են կազմում Երուսաղեմի հայոց Պատրիարքության հմր. 3624 (1041 թ.) ու Երևանի Մատենադարանի հմր. 3784 (1057 թ.) և հմր. 974 (ԺԱ. դ.) Ավետարանների Պայծառակերպության մանրանկարները, որոնք պես ծագում են միևնույն նախօրինակից: Այս երեք մանրանկարներում էլ Պայծառակերպությունը Անրկապացված է Ղազարոսի հարության տեսարանի հետ, որը բացատրվում է Տերունական պատկերի միջոցով Հիսուսի աստվածության արտահայտման հետևյալ երեք աստիճաններով՝ մկրտության ժամանակ Աստվածությունը հավաստվեց հնչած Հայրական Զայնով, պայծառակերպության ժամանակ ճառագած լույսով հայտնվեց աստվածության փառքը, իսկ Ղազարոսի հարություն տաղով՝ Երևաց աստվածային գորությունը: Հիշյալ երեք մանրանկարներում Սովուն ու Եղիան ևս գտնվում են ամպը խորհրդանշող շրջանակի մեջ:

Անհրաժեշտ է նշել, որ իրավիճակային մի ընդհանրություն կա Մկրտության և Պայծառակերպության մանրանկարների միջև: Երկու դեպքում էլ Քրիստոս կանգնած է, և երկու դեպքում էլ երկնքից հնչող Աստվածային Զայնն ասում է. «Դա է Խն սիրելի Որդին», որը երկու պատկերներում էլ արտահայտվում է երկնքի շրջագծից Անրեք պարզված Աշով և Վերշինիս մոտ գրված Հայրական հիշյալ խոսքերով:

1307 թ. ընդօրինակված Գլաձորի Ավետարանում մկրտության հետ զուգահեռ ավելի ցայտուն դարձնելու համար Թորոս Տարոնացին ձվածիրի վրա պատկերել է նաև աղավնակերպ Սովոր Հոգուն, որով առավել է ամրողացվել Մկրտություն-Պայծառակերպություն զուգահեռը (Ձկ. 6):

Պայծառակերպության պատկերների համադրական քննությունը ցուց է տալիս, որ ժամանակի ընթացքում իրար հաջորդող մանրանկարներում Սովուն ու Եղիան աստիճանաբար հետամում են ամպը Անրկապացնող ձվածիրից: Հմր. 974 և Սովորնու (հմր. 7736,

<sup>8</sup>Տե՛ս Հ. Պոկրովսկի, Եվանգելիս և պայտառքան նկոպոգրաֆիա, էջ 202:

ԺԱ. Դ.) Ավետարաններում նրանք արդեն ձվածի եզրում են, իսկ հաջորդող դարերի պատկերներում հիմնականում շրջագծից դուրս են գտնվում կամ հաված վերջինիս, որը ինչ-որ տեղ խորհրդանշում է ամպի՝ նրանց վրա տարածվելը և կամ էլ ձվածիրում միայն Քրիստոս է պատկերվում:

Պայծառակերպության ժամանակ Պետրոս առաքյալը, դիմելով Հիսուսին, ասում է. «Տէ՛ր, լավ է, որ մենք այսուեն ենք. եթե կամենաս, եթեր տաղափարներ շիմենք, մենք Քեզ համար, մենքը՝ Սովորեա, մենք էլ՝ Եղիայի»: Այս խոսքերի հետևողությամբ Հիսուս, Սովորեա և Եղիան պատկերվում են տաղափարաններեր խորաններում:

Հովհաննես Երգնկացին Մատթեոսի Ավետարանի մեկնությունում գրում է, որ Պետրոս առաքյալի այս խոսքերում արտահայտվել է Սուրբ Երրորդության խորհուրդը: Հայրը՝ Զայն Աստծո, Որդին՝ Պայծառակերպված Քրիստոս, և Սուրբ Հոգին՝ լուսավոր ամպը: Ինչպես գեղեցիկ ձևով Հովհաննես Երգնկացին է գրում, լուսավոր ամպը խորհրդանշում է Սուրբ Հոգուն, որը ճշմարիտ լույսն է, որը լուսավորում է յուրաքանչյուր մարդու, որ զայիս է աշխարհ<sup>9</sup>:

Եվ, ինչպես նշում է Գլաձորի Ավետարանի մանրակրկիտ արվեստագիտական վերլուծությունը կատարած Ա. Սանչյանը, ծաղկողը, ձվածիր անմիջապես վրա պատկերելով աղավնուն, ցանկացել է ձվածիրը ներկայացնել որպես ամպի և ըստ այդմ Սուրբ Հոգու խորհրդանշից<sup>10</sup>.

Ամպը երբեմն ոչ թե ընդհանրացված ձևով կապույտ կամ ոսկեգույն ձվածրով է պատկերվում, այլ հենց ամպերի ձևով:

ՊԱՅՄԱՆԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՍԸ - Քրիստոսի պայծառակերպվելը Մատթեոս, Մարկոս և Ղուկաս ավետարանիները լույսեն են ներկայացնում.

Մատթեոս. «Եվ նրանց առջև պայծառակերպվեց, և Նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը. և Նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը» (ԺԲ 2):

Մարկոս. «Եվ նրանց առջև պայծառակերպվեց: Եվ Նրա զգեստները փայլուն, խիստ սպիտակ դարձան, այնպես որ երկրի վրա ոչ մի լվացք անող չի կարող այդքան սպիտակեցնել» (Թ 2):

Ղուկաս. «Եվ երբ աղոթքի էր կանգնած, Նրա երեսի տեսքը այլակերպվեց, Նրա զգեստը փոխվեց և փայլուն-սպիտակ դարձավ» (Թ 29):

Համաձայն այս Ակարագրությունների՝ Քրիստոս հիմնականում պատկերվում է սպիտակ ու լուսավոր հանդերձներով և իրենից ճառագոր լույսի շողերով: Վկայակոչելով Եկեղեցու հայութի մեկնությունները՝ Հ. Քյուելանը գրում է. «Արդ, իր բնույթով անեղ լույսը աստվածային փառքի կամ աստվածության դրսերումն է»<sup>11</sup>:

Թե ինչու Հիսուս ցոյց տվեց աստվածային իր փառքը խաչելությունից առաջ, IV դարի եկեղեցական հայութից Եփրեմ Ասորին այսպես է բացատրում. «Եցոյց նոցա զթագաւորութիւն յառաջ քան զմաք իւր, և զօրութիւն իւր յառաջ քան զկապի իւր, զփառս յերեսս

<sup>9</sup> Տե՛ս Հովհաննես Երգնկացի, Մեկնություն Սուրբ Ավետարանին Մատթեոսի, Էջ 365:

<sup>10</sup> Տե՛ս Mathews T.F. & A.K. Sanjian, Armenian Gospel Iconography: The Tradition of the Glajor Gospel, Washington, 1991թ.: Գաձորի Ավետարանի մասին տեսքն նաև T. Mathews & Taylor, The Armenian Gospels of Gladzor, Los Angeles, 2001, Էջ 119:

<sup>11</sup> Հ. Քյուելան, Հրվագներ իսյ միջնադարյան արվեստի ասրբանականության, Ա. Էջմիածին, 1995, Էջ 26:

իր յառաջ քան զթուրմ, զպատիւն յառաջ քան զանարգանսն, զբանդերձս լուսափալլս յառաջ քան զմերկութիւն իւր»<sup>12</sup>:

Այսպիսով, ըստ Եփրեմ Աստրու, Հիսուս, պայծառակերպվելով մինչև խաչելությամբ մահը, ցոյց տվեց իր փառքի թագավորությունը, և մինչև կապվելը՝ իր զորությունը, և մինչ մահը երեսին թքելը ու ապտակելը նույն երեսի վրա ծագեցրեց իր փառքի լուսը, մինչ անարգամքը նախ պատիվը ցոյց տվեց և մինչ խաչի վրա մերկացվելը երևաց լուսափալլ հանդրձով:

Մովսեսը երբ Սիմա լեռան վրա Տիրոջի ստամու է Տամարանան, աստվածության լուսից նրա երեսը սկսում է լուսով ճառագել. «Խրանքեացիները տեսնում էին, որ Մովսեսի երեսը ճառագում է»: Եփրեմ Աստրին այս լուսը, որպես ստացված լուս, տարբերակելով Հիսուսից բխող բուն աստվածության լուսից, գրում է. «Խոչ հանդերձ Նորա իբրև զլոյս, եցոյց նոցա, թէ յամենայն մարմնոյ Նորա բդիմ փառք աստուածութեան Նորա, և յամենայն անդամոց Նորա ծագեցաւ լոյս Նորա: Ոչ որպէս Մովսէսին արտաքրոյ մարմնոյ նորա ծագեցաւ վալեշապէս, այլ լինրէ ծագէր փառք աստուածութեան Նորա»<sup>13</sup>:

ԺԲ դարի հայ եկեղեցական մատենագիր Սարգիս Կուռնդը ևս, պայծառակերպվությունը ներկայացնելով հարության հետ տարվող գուգամեռում, գրում է. «Զի զիտացեն, եթէ այն, որ փոխեաց զբանդերձ իւր, նոյն է, որ կենդանացուցան; զմարմինն իւր, զոր զգեցեալն էր»<sup>14</sup>:

Սարգիս վարդապետը ևս գրում է, թէ պայծառակերպվելով մինչ անարգվելը՝ ցոյց տվեց իր աստվածային փառք. «Եցոյց զիտան յառաջ քան զանարգանսն»<sup>15</sup>:

Մինչ խաչելությունը աստվածային փառքը ցոյց տալը ԺԳ դարի մատենագիր Հովհաննես Երգմկացին էլ այսպես է բացատրում. «Ցուցցէ զիտան աստուածութեան իւրոյ՝ յառաջ քան զլարութիւն, զի յորժաւ ի մեռելոց յարիցէ՝ ծանիցեն թէ ոչ վասն վաստակոց էաւ զիտան, այսինքն՝ վասն խաչին, այլ ուներ զնա յառաջ քան զիսաշն»<sup>16</sup>: Համաձայն այս բացատրությամբ՝ Քրիստոս մինչև խաչվելը ցոյց տվեց իր փառքի լուսը, որպեսզի հարությունից հետո չասեին, թէ փառքի այդ լուսը նա ստացավ ի զնահատություն իր կրօն չարչարանքների<sup>17</sup>:

Պայծառակերպության տեսարանում Սույր Երրորդությունը եթեն ընդհանուր պատկերում արտահայտվում է Հայրական Աշխ, լուսավոր ամսի (Սույր Հոգի) և Քրիստոսի պատկերմամբ, ապա բուն պայծառակերպության դրվագում այն ներկայացվում է գումարուացային ներերանզներով և զծագումներով: Ըստ այդմ, Քրիստոս պատկերվում է երեք լեռներից կենտրոնականում ծվածի մեջ, և Նորմից լուս է ճառագում:

Երրորդության զաղափարն այստեղ արտահայտվում է հետևյալ ձևերով.

ա. Զվածքի գումային տոների եռաստիճան փոփոխությամբ:

բ. Քրիստոսի՝ դեպ առաքյալներն ու մարգարները տարածվող լուսի շիթերից յուրաքանչյուրը ներկայացվում է երեքական ճառագայթով:

<sup>12</sup> Սորոյն Եփրեմի Մաքրնագրութիւնը, հիր. Դ, ճառը և աղօթը, Վեննդիկ, 1836, էջ 64:

<sup>13</sup> Նոյն գուղում, էջ 65:

<sup>14</sup> Սարգիս Կուռնդ, Մնկութիւն Անվարանին Դուկասո, աշխիր. Եզնիկ ևպ. Պնդրոսյանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 226:

<sup>15</sup> Նոյն գուղում, էջ 229:

<sup>16</sup> «Եղիանես Երգմկացի, Մնկութիւն Սույր Անվարանին որ ըստ Մաքրեւսի, Կ. Պոլիս, 1825, էջ 358:

<sup>17</sup> Պայծառակերպության ժամանակ իրած լուսի բնույթի մասին հայ և ընդհանրապես քրիստոնեական գրականության մեջ առկա բմբոնումների մասին գիւն «Քյուեյս», եղվ. աշխար., էջ 26-30:

գ. Զվածրի լուսի գույնն ունեցող երեք գծեր իշխում են առաջալների լուսապատճեն (Ակ. 7 Կեռամի Ավետարան, 1265 թ., Հռոմեա, Երուսաղեմի հայոց Պատրիարքություն, ձեռդիմություն, 1956, 140թ.):

դ. Վերևից դեպի ձվածիրն են իշխում երեք նման գծեր, և ձվածրի ներքիցից դարձյալ երեք գծեր են ձգվում դեպ առաջալները, որով թե՛ երկնային Երրորդությունն է ներկայացվում և թե՛ Երրորդության լուսի տարածումը երկրի վրա:

ե. Սուրբ Երրորդությունը արտահայտվում է ձվածրի ներսում Քրիստոսի շորջը ներզծված եռանկյունաձև շեղագծերով, որոնք արդեն այս ըմբռնումը երկրաչափական որոշակի խորհրդաբանական ըմբռնումների մեջ են ներկայացնում (Ակ. 8՝ Ավետարան, ԺԳ դ., Մատենադարան, ձեռդ. հմր. 7644, 71թ.):

Պատկերագրական այս ըմբռնումները բնորոշ են նաև ընդհանուր քրիստոնեական և ի մասնավորի՝ Բյուզանդական արվեստին: Անդրադառնալով դրանց խորհրդաբանությանը՝ Ծիլերը գրում է, որ ձվածրի մեջ գույների և գծերի նման գուգորդումները խորհրդանշում են Սուրբ Երրորդության հայտնությունը պայծառակերպության լուսի մեջ<sup>18</sup>:

Անդրաժեշտ է նշել, որ այս ըմբռնումը հայ մեկնաբանական գրականության մեջ արտահայտվել է արդեն յոթերորդ դարում: Ավանդաբար Մովսես Խորենացուն վերագրվող «Յաղագ Վարդապատին խորհրդոյ» գործը բանափրությունը այժմ վերագրում է ոչ թե Պատմահորը, այլ նրանից երկու դար անց՝ յոթերորդ դարում ապրած Մովսես Քերթողին: Պայծառակերպության ժամանակ ճառագած լուսի մասին այս գործում ասվում է. «Զերեք պայծառեան լուսոյն եզարուն ճառագայթ, որը Միահինն այսաւը ի Յափարական լերին գերրորդութեանն բռոյր յինքն փայլեաց զլոյս»<sup>19</sup>:

Ընդհանուր բառերը ասես պատկերագրական մեկարագրությունը լինեն պայծառակերպության լուսի եռաստիճան, եռաշիր ու եռաշող դրսնորումների, որը բերված հատվածի բառացի բարգմանությամբ արտահայտվում է այսպես. «Երեք պայծառություն ունեցող լուսի միաբուն ճառագայթ, որ Միահինն այսօր Յաբրորական լեռան վրա Երրորդության ողջ լուսը փայլեցրեց (ճառագեց) Խրենով»:

Միջնադարյան մեկնություններում ասվում է, որ Քրիստոսի պայծառակերպությամբ կատարվեցին Մաղաքիա, Ամբակում և Եսայի մարգարեների մարգարենությունների հետևկալ խոսքերը.

«Բայց ձեզ՝ իմ անունից երկուու կրողների համար արդարության արեգակը պիտի ծագի, բժշկություն պիտի լինի նրա շողերի մեջ» (Մադ. Դ 2):

«Նրա ճառագայթները լուսի պես կլինեն» (Ամբ. Գ 4)

«Լուսավորվի՛ր, լուսավորվի՛ր Երուսաղեմ,

Քանզի հասել է քո լուսը

Եվ Տիրոջ փառքը քեզ վրա է ծագելու» (Եսայի Կ 1):

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹԱՐԱՌ ԼԵՇՈՂ - Ավետարանիչները չեն գրում, թե ո՞ր լեռան վրա է տեղի ունեցել պայծառակերպությունը: Մատթեոսը և Մարկոսը գրում են «մի բարձր լեռ», իսկ Ղոկասը՝ պարզապես լեռ: Որոշ մեկնիչներ, նկատի ունենալով, որ Հերմոնը ունի 3000 մետր բարձրություն, ինչպես նաև հաշվի առնելով այն համազամանքը, որ Հիսուս տեղից տեղ գնալիս առավել հաճախ այս լեռան մոտով էր անցնում, ենթադրում են, որ պայծառակերպությունը տեղի է ունեցել Հերմոնի վրա:

<sup>18</sup> Ճիլեր, Խշկ. աշխար., Խջ 147:

<sup>19</sup> Մաքնագիրք Հայոց, հր. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, Խջ 433:

Եկեղեցական ընդհանրացված պալատությամբ, սակայն, ասվում է, որ այն տեղի է ունեցել Թարոր լեռան վրա: Դեռևս 5-րդ դարում Եղիշեն՝ Պայծառակերպությանը նվիրված ճառում ասում է, որ այն կատարվել է «ի Թարոր լերին»<sup>20</sup>:

Սիմա շեռան վրա Աստծո՝ Մովսեսին երևալու և վերջինիս դեմքի՝ լուսով պատվելու հետևողությամբ Մովսես Քերթողը 7-րդ դարում գրում է. «Եւ էր տեսանել զթափար նոր զուն Սիմա լեռան սուրբ եւ վայր աստուածաբնակ լուսիչն, վառեալ հրով եւ ամպով»<sup>21</sup>:

Հիսուսի, Մովսեսի ու Եղիայի համար երեք տաղավար կառուցելու՝ Պետրոս առաքյալի խոսքերի հետևողությամբ, ինչպես որ Մովսեսն ու Եղիան ևս երբեմն գտնվում են տաղավարանման առանձին շրջագծումների մեջ, այնպես էլ Թարոր լեռն է հաճախ պատկերվում երեք գագաթներով, որոնցից կենտրոնակամ՝ բարձրին Քրիստոս է, իսկ մյուս երկու թերթել և ասես խոնարհվել են նրա վրա կանգնած Հիսուսի առջև: Դարձյալ այս տաղավարների հետևողությամբ արդեն 4-5-րդ դարերում Թարոր լեռան վրա երեք փոքրիկ եկեղեցիներ են կառուցվել:

5-րդ դարում այս եկեղեցիները տեսել և Պայծառակերպությանը նվիրված ճառում հիշատակում է Եղիշեն՝ գրուով. «Եւ ի տեղուցն, որ երևեցաւ նոցա Տէր լուսատոր պայծառութեամբն, յարևելից կողմանէ հովտացն, յևս բանիցն Պետրոսի՝ հետագոյն ի միմեանց շինեալ երիս եկեղեցիս, և ումին պաշտօնեայս բազումս, զատեալը և որոշեալը յամենայն մարմնատոր ցանկութեանց»<sup>22</sup>: Այսպիսով, ըստ Եղիշենի՝ այս երեք եկեղեցիները կառուցվել են երեք տաղավարներ պատրատելու մասին Պետրոսի խոսքերի հետևողությամբ:

Հաստ միջնադարյան մեկնիշների՝ Քրիստոսի պայծառակերպությամբ կատարվեցին Դավիթ մարգարիեի հետևալ խոսքերը. «Թարոր եւ Հերմոն յանուն Քո ցնծացեն» (Սիմ. ԶԼ 13):

ՄՈՎՍԵՍԸ ԵՎ ԵՂԻԱՆ - Ավետարանիշները միայն գրում են, որ պայծառակերպության ժամանակ հայտնվեցին Մովսեսն ու Եղիան, սակայն չեն նկարագրում, թե ինչպիսին էր նրանց արտաքինը այդ պահին: Ի պատասխան առաջ եկող այն հարցի, թե առաջյալները որտեղից իմացան, որ Հիսուսի երկու կողմերում գտնվողները Եղիան ու Մովսեսն են, միջնադարյան մեկնիշները ասում են, որ նրանց ճանաչեցին իրենց արտաքին տեսքից, որով նաև մանրանկարիչները են Մովսեսն ու Եղիային պատկերում Հին Կոտակարանի համապատասխան հատվածների և վերջիններին մեկնությունների հիման վրա ձևավորված պատկերագրությամբ:

Հովհաննես Երգմկացին ևս, տպով այն հարցը, թե որտեղից իմացան, որ Հիսուսի հետ խոսդները Մովսեսն ու Եղիան էին, գրում է. «Գիտէն, թէ... Եղիա այր թաւ և գիսատը՝ հանդերձ մաշկեաւ»<sup>23</sup>:

Նոյն ձևով էլ Գրիգոր Տաթևացին գրում է, որ Եղիային ճանաչեցին «մաշկեա համեկդիս»<sup>24</sup>: Այս և համանաման մեկնությունների հիման վրա Եղիան պատկերվում է անապատականին բնորոշ խոիվ մազերով ու մորուսով և կաշվե թիկնոցով: Քանի որ Հովհաննես Մկրտչի համար ասում էին, թե նա Եղիան է, որ եկել է, ուստի Եղիայի հետևողությամբ անապատականի նոյն տեսքով է մկրտության մանրանկարներում պատկերվում Հովհաննես Մկրտչը: Եղիա-Հովհաննես գուգահետի մասին, որն իր արտացոլումն է գտել նաև

<sup>20</sup> Սրբ Նորյ Եղիշի վարդապետի Մարքսնագրութիւնը, Վենետիկ, 1859, լք 213:

<sup>21</sup> Մարքսնագիր Հայոց, հր. Դ, լք 432:

<sup>22</sup> Սրբ Նորյ Եղիշի վարդապետի մաքննագրութիւնը, Վենետիկ, 1859, լք 237:

<sup>23</sup> Հովհաննես Երգմկացի, Մելկոնյան Անդրանիկի Մագրելոսի, լք 362:

<sup>24</sup> Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Զմբան հապոր, Կ. Պոլիս, 1741, լք 483:

Արանց պատկերագրությունում, Հովհաննես Երգնկացին գրում է. «Նախ զի զնոյն վարս ու Այր յանապատի բնակելով և մաշկեաւ շատանալով, որպէս Եղիա»<sup>25</sup>:

Համաձայն Աստվածաշնչի՝ Եղիան միշտ պատկերվում է ծեր, առանձին դեպքերում ձեռքերում մի գիրը պահած, որը խորհրդանշում է իր մարզարեն լինելը:

Հին Կոտակարանում թեև ասվում է. «Երբ Մովսեսը Վախճանվեց, հարյուր քառա տարեկան էր» (Բ Օրինաց Լ.Դ. 7), սակայն, ստվորաբար, նա պատկերվում է որպէս մի պատանի: Մովսեսին որպէս պատանի ներկայացնող մանրանկարներում նաև նրա պատերն են շեշտված կարմիր և ասես ճառագում են իրենց պայծառությամբ: Նա այսպես է պատկերվում համաձայն այն խոսքերի, որ թեև 120 տարեկանում մահացավ, սակայն «այդ տարիքում ո՞չ նրա տեսողությունն էր վատացել, ո՞չ էլ դեմքը խորշումել» (Բ Օրինաց Լ.Դ. 7): Ինչպես Եղիշեն է գրում, «Մերութիւն ոչ թարշամեցոյց զգեղ նորա, և հիւանդութիւն ոչ ապականեաց զմարմին նորա»<sup>26</sup>: Գրիգոր Տաթևացին էլ գրում է, որ առաքյալները «զուեալ էին ի Կոտակարան, թէ Մովսեսի լուսատրեցան երեսքն, իսկ ի յերկին առ Տէրն, տեսին զնա և ոյնպէս ծանեան»<sup>27</sup>:

Մովսեսը պայծառ և առուզ, իսկ առանձին դեպքերում նաև դեմքին քող զցած է պատկերվում, քանի որ, ինչպես Ելիս գրքում է ասվում, երբ նա Սինա լեռից իշնում է Տիրոջց Տասնաբանյան ստացած, Տիրոջը դեմ հանդիման լինելու պատճառով նրա երեսը ճառագում էր, որը տեսնելով իսրայելացիները վախենում են, և այս պատճառով Մովսեսը իր երեսին քող է զցում, և այսպես ամեն անզամ նրա դեմքը ճառագում էր Տիրոջ մետ խոսելուց հետո: Պայծառակերպության տեսարանում Մովսեսը նաև հաճախ պատկերվում է Տասնաբանյայի տախտակները և կամ էլ դրանք խորհրդանշող մի գիրը ձեռքին:

Մովսեսին Տասնաբանյան ձեռքին պատկերելու մասին Տաթևացին գրում է. «...ի ձեռն Մովսեսի տախտակ երևեցաւ, որ ումեր յինքն զարատզամն Աստուծոյ»<sup>28</sup>:

Մանրանկարներում Մովսեսը հաճախ ոչ միայն գրքով կամ Տասնաբանյայով է պատկերվում, այլև վերջինիս խորհրդանշող թերթի. տախտակի վրա գրված է լինում «Ժ պատգամ» և կամ «Տասն պատգամանն»: Մանրանկարների մեկ այլ խմբում էլ Մովսեսի ձեռքի տախտակին գրված է ողջ Տասնաբանյան խորհրդանշող առաջին պատվիրանը. «Լուր Խարայէլ, Տէր Աստուծ քո, Տէր մի է և սիրեցես զՏէր Աստուծ Քո յամենայն սրտէ քում» (Բ Օրենք Զ 5) (Ակ. Պ. Աստվարան, 1402 թ., Խիզան, ծաղկող՝ Հովհաննես քին., Աստեադարան, ձեռգ. Բմբ. 5562, 7ա):

Մի շարք մանրանկարներում, հատկապես վաղ շրջանի, Մովսեսը պատկերվում է պատաճքված՝ խորհրդանշելով, որ ինքը եկել է մեղյալների աշխարհից:

Ն. Պոկրովսկին, վկայակոչելով Հովհան Ուսկերանի «Զրուցներ Մատթեոսի Ավետարանի մասին» գործը, գրում է, որ այս պատկերագրությունը խարսխված է Ուսկերանի հիշատակած այն ավանդության վրա, համաձայն որի, հրեշտակները Մովսեսին հանում քերում են դագաղից, իսկ Եղիային էլ՝ երկնքից, որով նրանք ներկայացնում են մեղյալների և ողջերի աշխարհը, որը, ինչպես գրում է Ուսկերանը, խորհրդանշում է, որ Քրիստոս

<sup>25</sup> Հովհաննես Երգնկացի, Մելքոնթին Անդորրանին Մաթթեոսի, լ. 369:

<sup>26</sup> Սրբոյ Նօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մագիստրությունը, Վենետիկ, 1859, լ. 234:

<sup>27</sup> Գրիգոր Տաթևացի, Զմերան հագոր, լ. 483:

<sup>28</sup> Նոյն գլուխում, լ. 483:

իշխանություն ունի և կյանքի, և մարդկան վրա, և որ այնունետն Մովսեսը մեղյալներին էր ավետելու Փրկչի Գալստյան մասին, իսկ Եղիամ՝ ողջերին<sup>29</sup>:

Նոյն այս շրջանում համանման ձևով է գրում նաև Եփրեմ Աստրին. «Սա Խճն է արարողն Երկնից և Երկրի, և տէր կենդանեաց և մեռելոց. հրամայեաց Երկնից և հօրոյ զԵղիա. Ակատեաց Երկրի և Վերականգնեաց զՄովսէս»<sup>30</sup>. Եփրեմ Աստրին թեև չի հիշում Մովսեսին դագաղից համելու պատմությունը, սակայն, ըստ Էլովյան, տալիս է նոյն բացատրությունը, ինչ որ Ուկերերանը, թե Աստված է Երկնի և Երկրի Արարիչը, Տերը ողջերի և մեղյալների, որով և հրամայեց և Երկնից հչեցրեց Եղիային և Վերականգնեց՝ Վեր կանգնեցրեց, այսինքն՝ գերեզմանից համեց Մովսեսին:

Եղիայի համար ասվում է, որ Օրան քերեց ողջերի աշխարհից, որովհետև, ինչպես Թագավորաց չորրորդ գրքի Երկրորդ գլխում է պատմվում, Եղիան անապատում Երկնային կառուկ Երկինք փոխադրվեց և այսուեղ ողջ է մարմնով:

Մովսեսի ու Եղիայի երնալու մասին Ուկերերանի այս բացատրության հոգևոր-գեղարվեստական գեղեցիկ բացատրությունն ենք գտնում Մովսես Քերթողի հետևկալ տողերում. «Ան Մովսես Ամսահայելի արեգական անորակի և անմատոյց լուսոյն առաջին ծագումն ի մեզ փառաւըն Աստուծոյ, գտենչալին իր տեսեալ լոյն՝ մարմնոյ ծածկեալ վարագուրա, ցնծացեալ՝ յարութեամբ եկեալ ողջուներ նոյնահրաշ կերպի, աւետարեկով մեզ ի նոյն կենդանակերպի ի նորոգումն Աստուածորդույն յարութեամբ, զնա վկայեալ մահու և կենաց Տէր»<sup>31</sup>:

Մովսես Քերթողը Մովսես մարգարեին «արեգակի Ամսահայելի» և «անմատուց լուսի առաջին ծագում» է ամվանում, որովհետև մինչ Թարոր լեռան վրա Տիրոջ պայծառակերպվելը, Սինայում Մովսեսի դեմքը փալեց աստվածային լուսից: Այս լուսը քանի որ մարգարեից չի ենց, այլ անդրադարձումն էր անտվածային լուսի, ուստի Մովսեսին հայելու հետ է համեմատում, որը անդրադարձնում է եկող լուսը:

Եղիայի համար էլ գրում է. «Եւ Եղիա հրոյն վերամբարձեալ կառաւք, ի կենդանեացն վայրէ յողջոյն եկեալ մերատիա էական լուսոյն, վկայելով՝ թէ Տէր է Վերնոց և Անրքնոց»<sup>32</sup>:

Հովհաննես Երգմկացին էլ գրում է. «Մօսէս օրինացն էր խորհուրդ և Եղիա մարգարեիցն, որը տեսին զիփառ Նորա, որով հաւատամք, թէ օրինօք և մարգարէիք քարոզեցաւ խորհուրդ խաչի Նորա, որ փառը է Եկեղեցւոյ Սրբոյ»<sup>33</sup>:

Տաթևացին էլ գրում է. «Մովսես, վասնզի ի մեռելոց յարուցեալ, երևէ հողոտ և ի գերեզմանն եկեալ և լուեալ էին, թէ ոչ էին յօրշունեալ ծնօտքն Մովսեսի, զի այլ մեռելոց ոչ եղև այսպիսի, վասն որոյ ծանեան զնա:

Իսկ Եղիայի, վասն զի Երկնանըման փալյէին երեսք նորա, իմացան թէ յերկնից է գալն, որ նեռն կենդանի է»<sup>34</sup>:

Տաթևացու այս տողերում գտնում ենք Ուկերերանի հիշած պատմության արձագանքը, թե Մովսեսը քանի որ մեղյալներից հարուցալ՝ գերեզմանից ելմելով եկավ, հողոտ էր, և

<sup>29</sup> Տե՛ս Հ. Պոկրովսկի, Եванգելիք և պամյանքական պկոնոգրաֆիա, ստ. 201, ինչպես նաև Ի. Զլատուստ, Եսուս և Եպանական Մատթեոս, գ. II, Մոսկվա, 1839, ստ. 457:




<sup>30</sup> Սրբոյն Եփրեմի Մարինապրութիւնը, հիմ. Դ, լշ 63:

<sup>31</sup> Մարինապիտր Հայոց, հիմ. Դ, լշ 432:

<sup>32</sup> Նոյն գեղում:

<sup>33</sup> Հովհաննես Երգմկացի, Մակերերին Անվարանին Մարթուսի, լշ 361:

<sup>34</sup> Գրիգոր Տաթևացի, Զմերան հապոր, լշ 483:



Vol. 6






Ալ. 8



Ալ. 9



Ալ. 10



իսկոյն ճանաչեցին, որովհետո ուրիշ մեկը չէր եկել այնտեղից, իսկ երկնքից եկած Եղիա-ին էլ ճանաչեցին նրա նեմքի երկնանան փայլից:

Եղիայի երևալու համար տրվում է նաև հետևյալ բացատրությունը. Հիսուս մինչ Թարրո եղանքը և այնուեղ պայծառակերպվելը, երբ աշակերտներին հարցնում է, թե ի՞նչ են ասում իր համար, ինքը ո՞վ է, աշակերտները պատասխանում են. «Մեկը, թե Հովհաննես Մկրտիչը, և ուրիշներ՝ Եղիան, իսկ ումանք, թե՝ Երեմիան, կամ մարգարեներից մեկը» (Մտթ. ԺԷ 14): Եվ, ինչպես գրում է Եփրեմ Ասորին, աշակերտներին տարավ լեռը, որպես-զի ցուց տա, որ ինքը ոչ թե Եղիան է, այլ իշխանություն ունի Եղիայի վրա<sup>35</sup>:

Նոյն միտքն է հայտնում նաև Հովհաննես Երգնակացին<sup>36</sup>:

Մովսեսի ու Եղիայի միասեղ երևալը ունի մեկ այլ խորհուրդ ևս: Մովսեսը և Եղիան խորհրդանշում են Խրայելի սկիզբը և կատարումը, Մովսեսը՝ որպես օրենսդիր և հիմնա-դիր, իսկ Եղիան, որ գալու է ժամանակի ավարտին, համաձայն Մաղաքիա մարգարեի հե-տևյալ խորքերի՝ «Առա ես ձեզ մոտ եմ ուղարկում Թեզքացի Եղիային, նախքան որ կա Տիրոց մեծ ու երեկի օրը, որպեսզի նա հրո սիրտը դարձնի դեպի որդին, մարդու սիրտը դեպի իր ընկերը. չլինի այնպես, որ, գալով, հարվածն երկիրը միանգամից: Հիշեցնք իմ ծառա Մովսեսի օրենքները, ինչպես որ պատվիրեցի նրան Քորեքում, հիշեցնք նրա բոլոր հրամաններն ու պատվիրանները» (Մաղաք. Դ 4-6):

Նաև Մովսեսը խորհրդանշում է օրենքը, իսկ Եղիան՝ մարգարենությունները, և Քրիս-տոս նրանց բերեց՝ ցուց տալու համար, որ ինքն է լրումն օրենքի և մարգարենությունների: Ինչպես Եփրեմ Ասորին է գրում, «Եւ եղն լեռանն օրինակ եկեղեցւոյ և միաւորեաց ի նա Յիսուս զերկոսին զկտակարանս, զոր ընկալաւ եկեղեցի և ծանոյց մեզ՝ եթէ նա է շնորհող երկոցունց»<sup>37</sup>:

Եվ, վերջապես, նրան բերելը ումեր և հետևյալ խորհուրդը. մինչ այդ մարդկանց ծածուկ էին թե՛ Եղիայի և թե՛ Մովսեսի մարմինները: Եղիայինը, որովհետև նա երկիմք էր փո-խարդվել, և Մովսեսինը որովհետև նրան թաղում են Տիրոց պատվիրած տեղում, և ինչ-պես Հին Կտորակարանում է ասկում. «Ու ոք մինչև այսօր չգիտի, թե որտեղ է նրա գերեզմա-նը»: Եվ Հիսուս առաջալներին ցուց է տալիս ծածուկ մնացածներին՝ խորհրդանշելով, որ իր համար ծածուկ ոչինչ չկա:

Միաժամանակ, Մովսեսն ու Եղիան հանդես են գալիս որպես վկաներ՝ վկանելով Քրիստոսի աստվածության մասին: Ինչպես որ աշակերտները նրանց երկուսին ճանաչե-ցին իրենց հատկանիշների և արտաքին բնորոշ տեսքի հիմնա վրա, այնպես էլ Մովսեսն ու Եղիան վկայեցին Հիսուսի աստվածության մասին, թե Նա նոյն Տերն է, ով Մովսեսին հայտնվել էր անկեզ մորենու հրե փայլով և Եղիային՝ հովի շրջունում (Գ Թագ. Թ 12)<sup>38</sup>:

Հայկական մի շարք մանրանկարներում, հատկապես վաղ շրջանի, ոչ միայն Եղիայի ու Մովսեսի տեղերն են փոխված, այլև անզամ նրանց արտաքինը զարմանալիորեն մեկի-նը մյուսով է փոխարինված: Պատվերագրական այս ավանդությունը պահպան կենսունակ է եղել, որ Եղիան աշում որպես պատահի է պատկերված ոչ միայն ԺԱ. դարի հմր. 974 և 1057թ. հմր. 3784 ձեռագրերում, այլև ԺԴ. դարի հմր. 6305 և 1454թ. հմր. 6570 ձեռագրերում:

<sup>35</sup> Սրբոյն Եփրեմի մաքննագրութիւնը, հիմ. Դ, էջ 63:

<sup>36</sup> Հովհաննես Երգնակացի, Մնկութիւն Անկարանին Մաքրելուի, էջ 360:

<sup>37</sup> Սրբոյն Եփրեմի մաքննագրութիւնը, հիմ. Դ, էջ 66:

<sup>38</sup> Slav Mathews T. F. & A. K. Sanjian, Armenian Gospel Iconography: The Tradition of the Glajor Gospel, Washington, 1991 թ.:

Բոլոր այս մանրանկարներում Եղիայի գլխավերևում գրված է Եղիա, իսկ Մովսեսի գլխավերևում է՝ նրա անունը: Ինչպես ասացինք, մի շաբթ մանրանկարներում Մովսեսը պատկերվում է պատաճռով՝ խորհրդանշելով, որ եկեղեց է մեռաղթերի աշխարհից: 1316 թ. ընդօդական համարով՝ համար 4818 ձեռագրում Մովսես-Եղիա շրջափոխության արդյունքում արդեն Եղիան է պատաճռով պատված, և նրա գլխավերևում գրված է «Եղիա պատաճաւը»:

ԵՐԵՒ Ա.ԻՒ.ՔՅԱԼ. ՆԵՐԸ - Քրիստոսից ներքին՝ լեռան ստորոտին, պատկերվում են պայծառակերպությունից ապշարար և շփոթահար առաքյալները:

Ավետարամիչներից Մատթեոսը գրում է, որ պայծառակերպության ժամանակ առարյալները «իրենց երեսի վոր ընկան և սաստիկ վախեցան», Մարկոսն էլ գրում է՝ «զարհութած էին»: Ղուկասը, սակայն, ասում է. «Եվ երբ մրանք ամսի տակ ընկան, վախեցան»:

Արևելաքրիստոնեական արվեստում, Մատթեոսի և Մարկոսի խոսքերի հետևողությամբ, երեք առաքյալները պատկերվում են հավասարաչափ վախեցած և միանման վիճակում: Այն իր գրական արտամապությունն է գտնել նաև հայ միջնադարյան մատենագրությունում: Եղիշեն Պայծառակերպությանը նվիրված ճառում գրում է, որ առաքյալները սաստվածին լուսի ճառագրություն յոյժ արհագնակի թմրեալք լերկիր կործանեցան»<sup>39</sup>, պահնըն՝ ուշագնացությամբ գետին տապալվեցին: Նույն ձևով հայ միջնադարյան զանձերից մեկում է ասվում.

Երկիր մասիու կալեալ դոդային, ի վայր անկեալ յերկիր հայէին<sup>40</sup>:

Բյուզանդական ավանդություն, սակայն, նրանց ներկայացնում է պայծառակերպությանը տարրեր ձևերով արձագանքելիս՝ վեր համելով նրանց հոգեվիճակային տարրերությունները, երեք առաքյալների կեցվածքում պատկերելով նրանց բնավորությունների առանձնահատկությունները և տարրերակենան փորձառությունը:

Հայ արվեստը քանի որ հավասարապես հայրաբերվել է թե՛ արևելաքրիստոնեական և թե՛ բյուզանդական մշակությունների հետ, ուստի հայկական ձեռագրերում արտացոլվել են պատկերագրական այս երկու տարրերակենան էլ:

11-րդ դարի հայ մանրանկարչությանը նվիրված իր մեծարծեք ուսումնասիրությունում հայ արվեստի հմուտ գիտակ Տատյանա Խզմալլովան 11-րդ դարի երկու մանրանկարներում՝ հայոց 974 և Երուասինի հայոց Պատրիարքության 1041 ձեռագրում մատնանշում է արևելյան ազեղցություն՝ ասելով, որ առաքյալներից երկուսը՝ Պետրոսը և Հովհաննեսը, միևնուն դիրքով են պատկերված, նրանց միջև չկա հոգեվիճակային տարրերություն, և, դեմ հանդիման գտնվելով, ասես ձեռքերով ու դիմախաղով հաղորդակցվում են միմյանց հետ: Հակոբոսը, սակայն, պատկերվում է ծնկած և ձեռքերով գետնին հենված<sup>41</sup>:

Երեք առաքյալներին միանման պատկերելը առավել ցայտուն է արտահայտվել 1057 թ. գրված Մալաթիայի Ավետարանում:

Պայծառակերպության տեսարանում երեք առաքյալների պատկերագրության գարգաման որպես հաջորդ փուլ Խզմալլովան մատնանշում է Մուղնու Ավետարանը:

Սկսած XI դարից՝ Պայծառակերպության դրվագում Հակոբոս առաքյալը պատկերվում է մեկ ձեռքով գետնին հենված և երկրորդ ձեռքը աչքերին տանելիս՝ ճառագոր լուսից պաշտպանվելու համար: Առանձին դեպքերում Հակոբոսը պատկերվում է կանգնած և թիկումքով դեմ լուսար և ասես ցանկանում է զնալ լեռն ի վար, առանց աչքերը լուսից ծածկե-

<sup>39</sup> Սրբոյ Նորը մնոյ Եղիշի վարդապետի մաքրնապրութիւնը, լ. 217:

<sup>40</sup> Եղևանի Մագիստրապան, մնո. հար. 424, 186ր:

<sup>41</sup> Տն. Տ. Ա. Իշմայլովա, Արմանական մինչառականության պատկերագրության արդյունքները, Մոսկվա, 1979, լ. 77:

լու: Եվ Հակոբոսը ճիշտ այդ ձևով է պատկերվում Մուղնու Ավետարանում (Ակ. 10, ԺԱ. Դ., Սատենադարան, ձեռք. հմր. 7736, 15ա): Նա ձեռքը բարձրացրել է, սակայն չի ծածկել աչքերը:

Պետրոսի կիսաշրջված և կիսաթեքված դիրքում հզմալլովան մատնանշում է արտացոլումը սկզբնապես նստած պատկերվող առաքյալի արխակի դիրքի:

Նույնը վերաբերվում է և Հովհաննեսին: Առանց ծնկելու նա առաջ է թեքվել և դեմքը հենել ձեռքերին<sup>42</sup>:

XII-XIII դարերում, սակայն, արդեն հստակորեն ձևավորվում է առաքյալներին պատկերող դրվագը, որը նրանցից յուրաքանչյուրը, ինչպես ասացինք, ներկայացվում է իր տարիքին և խառնվածքին բնորոշ հոգիվիճակով (Ակ. 11՝ Ավետարան, 1268 թ., Հռոմիլա, Ծաղկող՝ Թորոս Ռուպին, Սատենադարան, ձեռք. հմր. 10675, 128թ.):

Պետրոսը, թեև ցնցված ու ապշարա այս անսովոր պայծառակերպությունից, սակայն որպես վեմն հավաստ՝ հստատակամ և ամուր, չի կորցնում ինքնատիրապետումը, ծնկած, բայց սևեռուն հայցը նայում է Մովսեսի ու Եղիշի հնա գրուցող Հիսուսին: Քանի որ նա առաքյալներից ամենատարեցն էր, միշտ պատկերվում է սպիտակամորուս, սովորաբար մի ձեռքով երեսը ծածկած, սակայն հայցը Տիրոջը՝ զարմանք և հիացմունք արտահայտող ինքնատիրապետումամբ:

Տպավորվող հոգով երիտասարդ ու նախանձահոյզ Հովհաննեսը ցնցվել է տեղի ունեցածից, ընկել գետնին և ծածկել աչքերը՝ չկարողանալով տանել կուրացուցիչ լուսաը: Տպավորությունն ավելի շեշտելու համար հաճախ նա ներկայացվում է զյսիվայր, դեպ լյառն ի վար ներքև ընկած և ձեռքերով զլուխը բռնած ու դեմքը ծածկած:

Պետրոսի և Հովհաննեսի միջև միշանկյալ դիրք է գրավում միշին տարիքի Հակոբոսը՝ իր հանդարտ խառնվածքով: Նա ցնցվել է տեղի ունեցածից, ծնկել, նույնիսկ թվում է, թե գետնին է ընկնելու, սակայն միաժամանակ ձգուում է նայել, թե ինչ է տեղի ունենում այնտեղ՝ լեռան վրա: Մի ձեռքով հենաված է գետնին, մյուսով աչքերն է պաշտպանում լուսից: Միշանկյալ այս վիճակն արտահայտվում է նաև մի աչքը փակերով և մյուսով նայելով, որը հշան է միաժամանակ թե՛ շիոթության և թե՛ ինքնատիրապետուման<sup>43</sup>:

Թարոր լեռան վրա մարգարեների և առաքյալների ի մի գալու մասին Եփրեմ Ասորին գրում է. «Եւ եղան լեռանն օրինակ եկեղեցւոյ և միատրեաց ի նա Յիսոս գերկոսին Կտակարանն, զոր ընկալաւ եկեղեցի և ծանուց մեզ՝ եթէ նա է շնորհող երկոցունց»<sup>44</sup>:

Այսպիսով, նման բացատրությամբ թարոր լեռը խորհրդանշում է եկեղեցին: Այս լեռան վրա Հիսուս ի մի բերեց, միավորեց երկու Կտակարանները, որը ընդունեց եկեղեցին՝ մեզ սովորեցնելով, որ Տերն է այս երկու Կտակարանների շնորհողը:

<sup>42</sup> Նոյն գևերում, լշ 174:

<sup>43</sup> Տե՛ս Հ. Պոկրովսկի, Եվագելու և պամյուսական հոկուգրաֆիա, լշ 202:

<sup>44</sup> Սրբյան Եփրեմի մաքրեագրությունը, հպ. Դ, լշ 66: